

Ներկայացվեց Լոռու մարզպետի 2015թ. հաշվետվությունը

26.02.2016

Այսօր Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում անցկացվեց այս տարվա առաջին մարզխորհրդի նիստը, որին ներկա էին նաև ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության, մարզի հասարակական, քաղաքական կազմակերպությունների, համայնքների ղեկավարների, ստեղծագործական միությունների, հոգևոր դասի, հանրության ու լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը: Ողջունելով ներկաներին, նա ամփոփելույթով անդրադարձավ 2015թ. ընթացքում կատարված աշխատանքներին, նշանակալի իրադարձություններին և խնդիրներին: Ըստ մարզի ղեկավարի, 2015 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակայությունների և 2014թ. հոկտեմբերի 6-ի ՀՀ կառավարության թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների հիմնադրույթների հետևողական իրականացումը: Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2015թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

- պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը,
- արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին
- փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանումը և աջակցությունը,
- տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:
- աջակցությունը կապի նոր ծառայությունների բացմանը և սպասարկման որակի բարելավման խթանումը,
- մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը:
- բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը,
- առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը,
- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի

իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը,
• նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը,
• «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված
միջոցառումների իրականացումը և այլն:
Ա. Նալբանդյանը հանգամանորեն ներկայացրեց նշված, ինչպես նաև մի շարք այլ
ուղղություններով տարվա ընթացքում կատարված աշխատանքները:
-Նախորդ տարին լի էր մարտահրավերներով: Քանի որ մարզը հիմնականում
արդյունաբերական է, ուստի առավելաբար աշխարհաքաղաքական իրավիճակով,
համաշխարհային շուկայում մետաղի գների կտրուկ անկմամբ պայմանավորված՝
լուրջ դժվարություններ ունեցանք: Այս տարին ևս լի է մարտահրավերներով ու
մեզնից մեծ ջանքեր են պահանջվելու սոցիալական խնդիրները մեղմելու,
տնտեսական իրավիճակը կայուն պահելու համար, սակայն լիահույս եմ, որ այս
տարվա երկրորդ կիսամյակից սկսած՝ իրավիճակը փոքր-ինչ կբարելավվի ու արդեն
հաջորդ տարվա իմ հաշվետվության մեջ կկարողանամ անդրադառնալ մարզում
արձանագրված լուրջ հաջողություններին,-ամփոփելով խոսքն ասաց մարզպետը:

(Ընդարձակ հաշվետվությանը կարելի է ծանոթանալ Լոռու մարզպետարանի
պաշտոնական կայքէջի «Մարզպետարան» բաժնի «Հաշվետվություններ»
ենթաբաժնում՝ <http://lori.mtaes.am/files/docs/19144.pdf> էլ.հասցեով):